

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵԻ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ողբի ժանրի ուսուցումն ավագ դպրոցում /Մ. Խորենացի, Գր. Նարեկացի,  
Ն. Շնորհալի/

Ուսուցուիչ՝ \_\_\_\_\_ Սվետլանա Ավետիսյան  
(անուն, ազգանուն, հայրանուն)  
/«Գյումրու թիվ 37 դպրոց» ՊՈԱԿ/

«\_\_\_\_\_» \_\_\_\_ 2023թ.

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	Էջ 3
<b>Գլուխ Ա</b>	
Ողբը՝ իբրև զրական տեսակ. աստվածաշնչյան ակունքները.....	Էջ 5
<b>Գլուխ Բ</b>	
Ողբի ուսուցումն ավագ դպրոցի 10-րդ դասարանում.....	Էջ 11
Եզրակացություն.....	Էջ 24
Օգտագործված զրականության ցանկ.....	Էջ 26

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ողբը թեմատիկ առումով լայն ընդգրկում ունի, արտացոլում է կյանքի այնպիսի իրողություններ և դեպքեր, որոնք եղերական բնույթ ունեն: Այստեղ իրար են հակադրվում «երանելի» անցյալը և դառնաղետ ներկան: Ի հակակշիռ ողբերգական իրականության՝ հեղինակի միտումը դառնում է գալիքի երազանքը, ժամանակակիցներին հորդորելն ու մսիթարելը: Ողբը գրվում է «ի սփոփանս տրտմեցելոց»:

Ողբը սթափ քննադատություն է, անկեղծ անհանգստություն: Նրա հարատև ուժն է մղել, որ ավանդաբար օգտագործվի հետազա մատենագիրների կողմից և դառնա միջնադարյան մատենագրության կարևոր ժանրերից:

Ողբի և ողբերգության ժանրը, թեմատիկան առատորեն սնվում են իին ու նոր փաստերով, շարունակում մնալ արդիական:

**Թեմայի արդիականությունը:** Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ողբի՝ իբրև գրական տեսակի նորովի ուսումսասիրության անհրաժեշտությամբ, ինչպես նաև գրական նյութի ուսուցմանն օժանդակող, այն առավել խոսուն և պատկերավոր դարձնող բնագրային նոր նյութերի տրամադրման առումով:

**Թեմայի ուսումսասիրվածության աստիճանը:** Ողբի՝ իբրև գրական տեսակի ուսումսասիրությանը նվիրված են բազմաթիվ աշխատություններ, որոնցում ուսումսասիրվել են թե՛ ժանրը, թե՛ համապատասխան թեմատիկ երկերը, ինչպես օրինակ՝ Աբեղյան Մ. «Հայոց հին գրականության պատմություն», Գասպարյան Դ. «Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն», Եղիազարյան Վ. «Հայ հին գրականության պատմություն», Խաչատրյան Պ. «Հայ միջնադարյան պատմական ողբեր (14-17-րդ դդ.)», Սաֆարյան Վ. «Հայոց միջնադարյան գրականություն», Նալբանդյան Վ., Ներսիսյան Վ., Բախչինյան Հ. «Հայ միջնադարյան գրականություն (Համառոտ պատմություն)» և այլն:

### Ուսումսասիրության նպատակները՝

1. Ավարտական աշխատանքի նպատակն է ուսումսասիրել և ներկայացնել ողբի՝ որպես ժանրատեսակի և արդի հայ իրականության միջև եղած աղերսները:

2. Քննության առնել ողբը՝ որպես ժանրատեսակ, բացահայտել և առաջարկել ավագ դպրոցում ողբի ժանրի ուսուցման առավել արդյունավետ եղանակներ ու մեթոդներ:

### **Ուսումսասիրության խնդիրները՝**

1. Ուսումսասիրել համապատասխան գիտատեսական և մեթոդական գրականությունը:
2. Ծանոթանալ ավագ դպրոցում հայ գրականության դասավանդման առանձնահատկություններին՝ նկատի ունենալով աշակերտների գիտելիքների մակարդակը և տարիքային առանձնահատկությունները:
3. Կազմել համապատասխան օրինակելի դասի պլան՝ «Մովսես Խորենացի. «Ողբ»» թեմայով:

**Ուսումսասիրության մեթոդները:** Կիրառվել են գիտահետազոտական հետևյալ մեթոդները՝ սկզբնաղբյուրի ընթերցում, գիտատեսական գրականության ուսումսասիրություն, համադրական-վերլուծական մեթոդներ, համեմատություն, ընդհանրացում:

## ԳԼՈՒԽ Ա

### ՈՂԲԸ՝ ԻԲՐԵՎ ԳՐԱԿԱՆ ՏԵՍԱԿ. ԱՍՏՎԱԾԱՇՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Ողբն իր բազմազան տեսակներով հայ իին և միջնադարյան գրավոր մշակույթի մի կարևոր բաժինն է կազմում: Ծնունդ առնելով մեր մատենագիտության սկզբնավորման իսկ շրջանում՝ այն՝ իբրև ժողովրդի կյանքի պատմական և գեղարվեստական արտահայտություն, հարատևել է մինչև նոր ժամանակները: Նրա զարգացումը մեծապես պայմանավորված է եղել օտար նվաճողներին ենթակա հայության պատմության եղերական ընթացքով:

Ողբասացությունը գոյություն է ունեցել որպես գրավոր խոսքին նախորդող և նրան զուգահեռ ապրող անգիր ստեղծագործություն՝ անմիջականորեն կապված մարդկային կենցաղի և առօրյայի հետ: Առաջին ողբերը մեծ մասամբ երևան են եկել իբրև ժողովրդական սզո ծեսի, այլ կերպ՝ մահենքի անհրաժեշտ մաս, թաղման արարողության հետ կազմել մեկ միաձույլ արվեստ, որի բաղադրիչներն են եղել լացն ու մրմունչը, խոսքը և դրանց համապատասխանող տիբրական մեղեղին, շարժումներն ու նվազը:

Ամրապնդվելու և ավանդական դառնալու ձանապարհին թաղման ծեսի ժամանակ կատարվող մահենքի ողբը հետզիետե ձեռք է բերել իր կատարողներին՝ ողբասաց կանանց, որոնք մեր հին մատենագիրների վկայությամբ հատկապես հեթանոսական և վաղքրիստոնեական դարերում բանարվեստի մյուս ստեղծագործողների հետ կարևոր դեր են ունեցել: Սզո և հուղարկավորության ժամանակ նրանց հյուսած երգերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Հովհանն Մանդակունին, Հովհաննես Դրասխանակերտցին, Գրիգոր Նարեկացին և ուրիշներ:

Զայնարկուներն առանձնակի ուշադրություն են դարձրել ողբի խոսքային կողմին և նրա արտաբերմանը: Մրմունչի, լացի հետ նրանք դիմել են ուժգնացող կանչերի, ձյուններին ու կականին, նվազարանների օգնությամբ կամ բերանացի՝ խոսքն օժտել են մեղեղիով: «Զայնարկո» բառը հենց ասելիքը ձալով, ձայնի գորեղ բարձրացումով մատուցողի իմաստ ունի: Նարեկացու մի վկայությամբ՝ նրանք, որ «զլալեացն յեղանակեն բանաստեղծութիւն», լսողների սրտի ցավերն առավել սաստիկ

Ճմլելու և արտասուր հոսեցնելու նպատակով հորինել են հանգավոր, հանգի շնորհիվ հասել խոսքի ներքին հարմարության և պատշաճության, տողերի դաշնության. «...համաձայն խոսքեր են չարահարում, հորինում հարմար, ամեն մի տողի վերջում միևնույն գիրը դնելով» [12, էջ 153]:

Հայ հին մատենագրության մի շարք երկերում ժողովրդական ողբն ու սգո ծեսը համարվում է հեթանոսություն, մոլություն ու Ճիվաղություն, իսկ նրա կատարողները ենթարկվել են խիստ քննադատության ու պարսավանքի: Լալկանների հասցեին իրենց զրվածքներում առանձնապես բացասաբար են արտահայտվել հայոց եկեղեցու հայրերը: Գրականագետ Պ. Խաչատրյանի նկատումով. «Սահակ Պարթև հայրապետի Կանոններում նրանց նկատմամբ հատուկ կետով պատիժ ու ապաշխարություն է սահմանվում» [8, էջ 10]:

Չնայած ողջ միջնադարի ընթացքում առկա այդ վերաբերմունքին, այնուամենայնիվ, սգո ծեսը և նրա ժամանակ կատարվող ողբը շարունակ գոյություն են ունեցել, ավելին՝ անգիր ողբասացությունը հող է նախապատրաստել գրական ողբի առաջացման ու գարգացման համար:

Հայ ողբագրության ծնունդը կապվում է մեր մատենագիտության զարգացման վաղ շրջանի հետ: Նրա առաջատար տեսակը, հիրավի, պատմական թեմայով ողբն է, որի առաջին նշանավոր օրինակը դեռևս հինգերորդ դարում տվել է քերթողահայր Մովսես Խորենացին: Դա մի դարաշրջան էր, որին նախորդող ժամանակում Սասանյան Պարսկաստանը և Բյուզանդիան, պատմիչ Ղազար Փարպեցու համեմատությամբ, Հայոց աշխարհը հնացած ձորձի պես պատռել–բաժանել էին երկու ծվենի, ապա և ընկել էր պարսկական մասում իր գոյությունը կարճատև պահպանած Արշակունյաց դինաստիան: Գրավոր մշակույթի սկիզբն ու նախնական վերելքը, այդպիսով, մեզանում զուգադիպում էին հայկական անկախ պետականության վերացմանը:

Ողբը սուսկ հայ գրականության ազգային շրջանակներով սահմանափակվող գրական անվանում չէ. այն թե՛ անտիկ և թե՛ հունական գրականության գործուն ժանրերից է եղել:

Հետևելով ձեռագրերին և ելնելով արտացոլվող նյութից ու թեմատիկայից՝ դրանք կարելի է բաժանել հինգ մեծ խմբի՝ անձնական–քնարական, պատմական,

դամբանական կամ գերեզմանական, վկայաբանական և տարերային աղետների առթիվ գրված ստեղծագործությունների:

**Անձնական-քնարականը** այն բոլոր ողբական երգերն են, որոնցում արտահայտություն են գտել միջնադարյան անձուկ իրականության պայմաններում ապրած անհատի հոգեվիճակը, տիտոր մտածությունը և փրկության տառապագին ձիչը: Դրանք ողբական շարականներ և աղոթքներ են (հատկապես «Ապաշխարության կարգի» շարականներ), մարդու ձակատագրի ողբերգականությունը բացահայտող և սիրո տվյալտանքն ու պանդխտության մեջ դեգերողի հայրենաթախծնությունն արտահայտող գործեր, որ հայ հին բանաստեղծության գանձերից են: Ժամանակի և հասարակության համար բնորոշը նրանցում արտացոլվել է անհատի հուզաշխարհի ու խորհրդածությունների միջոցով: Դրանք անհամաշափ ծավալ ունեն. մարդու հոգեվիճակի մի երանգը, մի գիծը պատկերող քառյակից տատանվում են մինչև միջնադարում մեզանում բավական տարածում գտած ողբանքները և հասնում Նարեկացու «Մատեան ողբերգութեանը», որի մեջ բեկվել է մարդկային հոգու ծովածավալ մի ալեկոծություն՝ «աշխարհից կտրվելու և մարմինն ու աշխարհը ընչացնելու ինքնատանջի հեծլլտացող թառանչներով» [1, էջ 425]):

**Պատմական ողբերի** թեման պատմական իրականությունն է, ողբագրի ժամանակակից կամ նրանից ավելի վաղ, երբեմն դարեր առաջ կատարված իրադարձությունները, մի խոսքով՝ պատմության հետ կապված դեպքեր, իրողություններ, ինչպես նաև խոհ, խորհրդածություն Հայաստանի պետական անկախության կորստի, նրա եկեղեցու անմիտքար վիճակի մասին: Ըստ այդմ, պատմական ողբերը կա՛մ ժողովրդի անցած ձանապարհի ամենալարված շրջանի ընդհանուր բնութագիրը, կա՛մ ել առանձին անցքերի արտացոլումն են:

Այսպիսով, ամենաընդհանուր կարգով եթե դիտելու լինենք, պատմական ողբի երկու տարատեսակներից մեկում գերիշխողը ողբագրի տրամադրություններն են, ժամանակաշրջանը բնութագրող նրա պատմաքաղաքական և հայրենասիրական խորհրդածությունները, իսկ մյուսում՝ պատմության անցքերը, նրանց քիչ թե շատ հանգամանալի նկարագրությունը, գրողի վերաբերմունքը նրանց նկատմամբ:

Մի այլ խումբ են կազմում **դամբանական կամ գերեզմանական ողբերը**, որոնք իրենց նյութով կա՛մ անմիջականորեն առնչվում են գրողին ժամանակակից կյանքի հետ, կա՛մ ել գրքային են, ծագում են հատկապես Նոր կտակարանից և այլ երկերից:

Դամբանական կամ գերեզմանական անվանումն իսկ արդեն ցույց է տալիս նրանց բովանդակությունը, այն է՝ վախճանվածի համար սպալը:

Դամբանական ողբերից մի քանիսը, ինչպես Դավթակ Քերթողի «Ողբ ի մահն Զիւանշիրի Մեծի իշխանին» գործը, Բարսեղ Վարդապետի «ողբերգական բանը՝ նվիրված Մարաշի և Քեսունի իշխան Բաղդունին, և այլ ստեղծագործություններ, իրենց բովանդակության պատմական հարստությամբ ու վավերականությամբ նույնպիսի նշանակություն ունեն, ինչ պատմական անցքեր արտացոլող ողբերը:

Պատմական անցյալի պատկերը նույնպիսի ուժեղ, բայց յուրահատուկ դրսեւորում է գտել միջնադարի հայ գրականության նաև մի այլ տեսակի մեջ՝ վկայաբանություններում, որոնք գրվել են թե՛ արձակ և թե՛ չափածո: Դրանցից շատերը, հատկապես չափածո հորինվածները, իսկապես ողբական ստեղծագործություններ են, որոնցում երևան է գալիս հայ ժողովրդի ազգային-քաղաքական և եկեղեցական մաքառման ոգին՝ հավատի, կրոնական կողմի խիստ ընդգծմամբ: Այդպիսի բովանդակություն ունեն Շուշանիկի և Վահան Գողթնացու վկայաբանությունները. այդպիսին են նաև ավելի ուշ՝ սելջուկյան, թաթար-մոնղոլական, թուրքմենական, թուրքական և իրանական տիրապետությունների ժամանակներում գրված վկայաբանություններից շատերը, որոնք մասամբ հրատարակված են, մասամբ էլ՝ անտիպ:

Ինչպես նշվեց արդեն, ողբագրության մի առանձին տեսակն էլ **տարերային աղետների առթիվ ստեղծված ողբերն** են: Դրանց նյութ են ծառայել շարժերի, մորեկի տարածման հետևանքով առաջացած կոտորածները, սովը, համաձարակները և այլն: Պետական-քաղաքական խնամքից ու հովանավորությունից զուրկ ժողովուրդը նման դեպքերում հաճախ գաղթել է, մեծ զրկանքների ու զոհողությունների գնուվ վերստին կյանք հաստատել նոր վայրերում: Բնական պատահարներին նվիրված ողբեր են գրել Ղուլօղլի Երզնկացին, ոճն Սողոմոն, Վրթանես Վարդապետը (հավանաբար Սոնկեցին), Սարգիս Գեղամեցին և ուրիշներ:

«Ողբ» ժանրային անվանումը վերաբերում է հատկապես պատմական թեմայով, ինչպես նաև դամբանական կամ գերեզմանական և բնական աղետների առթիվ գրված ողբերին: Պատմական ողբն ավելի, քան մյուսները, արտացոլել է հայ ժողովրդի կյանքն ու ձակատագիրը՝ ունենալով գրական իր որոշակի նկարագիրը՝ առարկան ու թեմաները, կառուցվածքը, գեղարվեստական հորինվածքն ու

պատկերավորման միջոցները և, վերջապես, կյանքի կոչվելու շարժառիթներն ու նպատակը:

Պատմական թեմատիկայով ողբագրության բոլոր ստեղծագործությունների միջով անընդհատ անցնում է մի գերազույն գաղափար, այն է՝ հայրենի երկիրը օտար նվաճողների լծից ազատ տեսնելու, խաղաղ ու անկախ ապրելու, հայրենիքի փրկության ու ժողովրդի ազատագրության գաղափարը: Այդ սևեռուն միտքն է առաջնորդել հայրենասեր ողբասացներին և դրան է ենթարկվում, այդ հայեցակետից ընթերցվում պատմության յուրաքանչյուր իրադարձություն:

Իրականության ու երազանքի բախումից էլ հենց ծնվում է պատմահայրենասիրական ողբը, որի մեջ գեղագիտական մյուս ըմբռնումներից ու հատկանիշներից ավելի արտահայտություն է գտել ողբերգականը: Ողբերգականը, կյանքի եղերական իրադարձությունները հեղինակներին չեն մղում անծայր հուսահատության: Որքան էլ նրանք համակվում են մոայլ տրամադրություններով, միտվում թախծոտ խորհրդածությունների, սակայն փայփայում են հույսի մի թել:

Անձնական քնարական ողբերգերը պատմահայրենասիրական ողբերի հետ համեմատելիս դժվար չէ նկատել, որ առաջիններում զոջացողը անհատն է, որ կյանքի ոչնչության գիտակցությամբ բացում է Աստծու պատվիրանի խախտումով իր կատարած մեղքերը, հավատում, որ իր հոգու համար գուք է փորել և ապաշխարանքի ու ինքնատանջի ճանապարհով ձգուում է արժանանալ հոգու փրկության, այսինքն՝ սեփական ողբերգության պատճառները որոնում է իր մեջ, իր աշխարհատենչ մարման մեջ:

**Պատմահայրենասիրական ողբերում,** ընդհակառակը, բանաստեղծը խոսում է ոչ թե մեկի, այլ շատերի, ժողովրդի անունից, թվում է ոչ թե անհատի, այլ ընդհանուրի մեղքերը, և թեև ի վերջո դրանք համարում է պատկերվող ողբերգության սկզբնապատճառ, բայց անմիջական պատճառ դիտում է թշնամուն և նրա չարագործությունների դիմաց Աստծուց հատուցում ակնկալում:

Ողբերը սկզբնապես գրվել են գլխավորապես արձակ (Խորենացի), բայց 12-րդ դարից սկսած պատմական ողբի տիրապետող ձևը դառնում է չափածոն, թեև արձակը ևս չի դադարում նրան գուգահեռ գոյություն ունենալուց: Արձակից չափածոյի անցումը պայմանավորված է եղել նրանով, որ չափածոն ավելի հարմար է դիտվել

բուռն զգացմունքներ ու հույզեր արտահայտելու ու գեղեցկության հասնելու հնարավորությունների տեսակետից:

Այսպիսով, պատմական ողբը հայկական միջնադարյան քնարերգության յուրօրինակ ժանրերից մեկն է: Պատմական ողբն ունի պատմաճանաչողական (իմացաբանական) և գեղարվեստական մեծ նշանակություն:

## ԳԼՈՒԽ Բ

### ՈՂԲԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Յուրաքանչյուր ժամանակաշրջանում մշտապես նորոգվելու միտված ստեղծագործական միտքն իր հետ բերում է գնահատման նոր չափանիշներ: Ժամանակն իր օրակարգում այսօր կյանքի է կոչել հայ գրականության վերագնահատման, վերընթերցման, վերարժերման հարցերը: Պատմական այս նոր փուլում արդիական իմաստավորման անհրաժեշտություն ունի նաև ողբի ուսուցումը հանրակրթական դպրոցում: Ողբի մեջ զաղտնագրված գաղափարները, բարոյական սկզբունքները, մարդկայինի մասին պատկերացումները ժողովրդի հավաքական կենսափորձով վավերացված մշտշենական արժեքներ են, որոնք յուրաքանչյուր դարաշրջանում ընկալվում և իմաստավորվում են նորովի: Բացառություն չէ նաև մերօրյա իրականությունը: Հանկարծադեպ ու անակնկալ փոփոխություններն առաջացրել են բարոյական սկզբունքների, սոցիալական հարաբերությունների հախուռն արժեզրկում, նոր արժեքների նույնքան հախուռն ներխուժում կեցության տարբեր ոլորտներ: Անցումային շրջանի այս անխուսափելի երևոյթներն իրենց ազդեցությունը պիտի թողնեին հատկապես աշակերտների մտածողության, հոգեբանության, հուզաշխարհի վրա: Ուսուցի խնդիրը պետք է լինի ժամանակի հետ կապված փոփոխության ձևերի մեջ նշմարել մշտական արժեքների գոյակերպը, դրա հետ հաղորդակցվելու ուղիների միջոցները և գտնել նաև ընթերցող աշակերտներին: Անհատի արժեքների համակարգում մարդու լիակատար ու բովանդակալից կենսակերպը պայմանավորող շատ նախադրյալների շարքում վճռորոշ նշանակություն ունի գեղեցիկի զգացողությունը: Դպրոցահասակ պատանու մտածողությունը առարկայական է, ամեն ինչ նա ուզում է տեսնել, զգալ սեփական փորձով. լինի դա իրապես, թե երևակայությամբ: Այդ պատճառով էլ գեղեցիկի մասին ուսուցչի զրույցները չպետք է դուրս գան առարկայական ոլորտից, պետք է ուղեկցվեն կյանքից կամ գրականությունից քաղված շոշափելի օրինակներով: Այս դիտանկյունից շատ կարևոր է դպրոցում ողբագրության ուսուցումը: Արտաքին իրադարձային շերտի ներքո նկարագրվող երևոյթը պայմանավորում է նյութի խորքային բնութագիրը, ինչի արտացոլում է նաև բնավորության և կեցության

միահյուսումը: Հետազոտելով ժամանակի գոյի տարբեր հայեցակետերը՝ կարելի է որակապես վերաիմաստավորել ողբագրության գեղագիտական գլխավոր սկզբունքները՝ նոր բովանդակությամբ լիցքավորելով աշակերտ-հասարակություն-աշխարհ-բնավորություն կապերը: Նոր շերտերի բացահայտմամբ ողբերի կառուցում ներդաշնակորեն տեղադրվել են այնպիսի աննախադեպ դրսնորուժներ, ինչպիսիք են խոհական լիցքը, այլաբանական խոսքը, բարոյական ըմբռնուժները, որոնք զալիս են ներկայացնելու մարդ անհատին իր բարդ և ոչ միանշանակ էռթյամբ: Ավանդականի և արդիականի փոխհարաբերություններում ողբի կառուցում ժամանակի շունչը զգացող և նուրբ դիտողականությամբ առաջադրված հրատապ գաղափարադրույթներ են արձարձվում: Կյանքի առանձին կողմերի պատկերմանը հարակցվում են հասարակական աղերսներում մարդ անհատի բարոյահոգեբանական կերպարի դրսնորուժները՝ ընդգծելով բարոյական ճշմարիտ արժեքների ուսուցումը: Հայտնի է, որ գրականության ուսուցման ընթացքում գեղեցիկի զգացողության ու ճաշակի ձևավորման համար հատուկ դասաժամեր չեն հատկացվում: Այդ նպատակն անբաժան է դասավանդման ամենօրյա գործընթացից: Այս առումով գրականությունը ապագա անհատի և քաղաքացու արժեքային համակարգը ամբողջացնելու անսահման հնարավորություններ է տալիս: Այդ նպատակին կարող են ծառայել նաև ողբերը, որոնց ուսուցումը և դրանց ուսուցմամբ գրական ունակությունների զարգացումը լավ հիմք կարող է դառնալ ուսուցչի համար հանրակրթական դպրոցում դաստիարակչական բեղմանական աշխատանք իրականացնելու համար: Նշենք, որ աշակերտների մեջ մարդկային հատկանիշները զարգացնելու և մշակելու գործընթացները չպետք է կապված լինեն միայն գեղարվեստական բնագրերի ուսումնասիրության հետ: Այդ գործընթացները տևական և բազմաբնույթ աշխատանք են պահանջում: Աշխատանքի կարևոր օղակներից մեկն էլ ստեղծագործական ինքնուրույն փորձերի խրախուսությունը: Գրականությունը, որը միշտ ուղղված է ներկային ու ապագային, երբեք չպետք է կորցնի իր հիշողությունը և պետք է կարողանա ի մի բերել ժամանակները՝ սկիզբն ու ընթացքը, երեկն ու այսօրը, պատմությունն ու արդիականությունը:

Այն հանգամանքին, որ ժամանքի արմատները տանում են Հին Հունաստան ու թատրոն, այնուամենայնիվ, հայ ժողովուրդը կարողացել է այն լիովին ընկալել և դարձնել իրենը: Ողբը պատմաքաղաքական իրավիճակի ծնունդ է՝ մշտական լարված

իրավիճակ, պատերազմ, մահ, անմիաբանություն, արտագաղթ, պանդիստություն, սով, ավերվածություններ, թագավորության ու անկախության կորուստ: Այս ամենը ստիպում են յուրաքանչյուրին մի պահ կանգ առնել և հայացք նետել անցյալի երեսելի օրերի վրա, նկատել ներկան ու փորձել ելք գտնել ու առաջ շարժվել, իսկ բանաստեղծի նուրբ հոգին ու ձկուն գրիչը տիսուր իրականությունը ներկայացնում է իր տեսանկյունից և դառնազին ողբում հարազատ ժողովրդի ու երկրի համար: Հայ իրականության մեջ ողբի ձևավորման բանահյուսական հիմքը եղել է ժողովրդական լայաց երգ-բանաստեղծությունը, որը հորինվել-կատարվել է հուղարկավորությունների ժամանակ: Ողբերգը, որը կազմել է նշանավոր անձանց թաղման ծեսի գլխավոր բաղադրիչը, կատարել են ողբասաց կամ ձայնարկու կանայք մեծ հանդիսավորությամբ, լալով, երգելով ու նվագելով, պարելով ու կաքավելով: Հանձին ողբասաց կանանց՝ ողբը ձեռք է բերել իր կատարողներին, որոնք թաղման ժամանակ լացուկոծի, հուզական խոսքի և տիսուր մեղեղու համադրման արհեստն իրենց հմտությամբ ու կատարման վարպետությամբ վերածել են իսկական արվեստի: Սգո երգերի կատարման վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են հայտնում մեր մատենագիրներն ու միջնադարյան բանաստեղծները: Ժամանակի ընթացքում ողբի թեմատիկ շրջանակն ընդլայնվել է, և դամբանական ողբի հիմքի վրա երևան են եկել պատմական, անձնական-քնարական, հիշատակարանային և այլ տեսակի ողբերը: Զարգացման շատ երկար ու հետաքրքիր ուղի է անցել այս ժանրը, ըստ երևույթին հեթանոսական շրջանում բնորոշ է եղել հուսահատական եզրահանգմամբ: Մրա դեմ պայքարելուն մեծ նշանակություն էր տալիս քրիստոնեական գաղափարախոսությունը: Բայց քրիստոնեական եկեղեցին չէր կարող և չկարողացավ միանգամբ լիովին հաղթահարել հուսահատական երանգները: Վաղ քրիստոնեական շրջանի հայ բանաստեղծները դեռևս տուրք էին տալիս դրան (Կոմիտաս Կաթողիկոս, Ղավթակ Քերթող): Հասկանալի է, որ նոր գաղափարախոսությունը աստիճանաբար արմատավորվեց մշակույթի մեջ: Եվ երբ բանաստեղծներն սկսեցին որոնել դժբախտությունների պատճառը, հետևելով Երեմիային, հանգեցին մարդկանց մեղքերը մատնանշելուն՝ փրկության հույսերը կապելով Աստծու գթասրտության հետ: Երեմիայի ազդեցությունը հայ ողբասացների վրա ձևական, երևութական է, չնայած գրեթե բոլորն էլ հիշում են նրան իրենց ողբերում: Այս ժանրի առաջին արտահայտությունները տեսնում ենք

Աստվածաշնչում, հիմսականում՝ Հին կտակարանում: Հետագայում Սուրբ գրքի թարգմանությունից հետո շատ հեղինակներ օգտվել են սուրբգրային ողբերից: Աստվածաշնչան ողբերն այնքան կատարյալ են գրված, որ թարգմանությունից զատ մարդիկ փորձել են այն դարձնել արձակ: Այսպիսի կատարյալ ողբի արտահայտություններ գտնում ենք Սողոմոնի «Երգ երգոցում», Դավթի սաղմոսներում և վերջապես Երեմիայի ողբում: Հին կտակարանում մի գիրք ամբողջությամբ նվիրված է Երեմիա մարգարեի ողբին, որը բաղկացած է հինգ գլխից: Ինչպես բոլոր մարգարեները, այնպես էլ Երեմիան շարունակ պատգամում էր. «Լսի՛ր Տիրոջ խոսքը, ո՞ղջ Հրեաստան, դու, որ մտնում ես այս դռներով՝ երկրպագելու Տիրոջը» [2, Երեմիա 7:16-20]: Այսպիսով, բերելով ընդամենը մի քանի օրինակ, մենք համոզվում ենք Աստվածաշնչում այս ժանրի կատարելության և հետագա ստեղծագործությունների վրա նրա ազդեցության մասին, իսկ աշխատանքի հետագա մասերում մենք կհամոզվենք դրանում: Հայ հին և միջնադարյան գրականության մեջ ողբագրությունն սկզբից նեթ չի ծագել իբրև անկախ տեսակ, երևան է եկել պատմագրական կամ այլ կարգի ծավալուն երկերում՝ որպես նրանց բաղկացուցիչ մաս, որպես ողբական հատված, մտորում հայրենիքի, նրա ժողովրդի, կորսված պետականության և իր փայլից զրկված եկեղեցու մասին: Ուստի բնական է, որ ողբն այդքան հաճախական կիրառություն ունի միջնադարյան հայ գրականության, ի մասնավորի՝ հայ պատմագրության շրջանակում: Միջնադարյան ողբին նվիրված իր արժեքավոր մենագրության մեջ Պողոս Խաչատրյանը ժանրն ի սկզբանե դիտարկում է «իբրև հայ ժողովրդի կյանքի պատմական ու գեղարվեստական արտահայտություն» [8, Էջ 5]:

Արդեն վերևում նշեցինք, որ ողբի ժանրը հայ գրականության մեջ նորություն չէ, այն սկզբնական շրջանում իր դրսևորումն է ունեցել բանավոր, սգերգերի տեսքով: 5-րդ դարում գրերի գյուտից, Աստվածաշնչի թարգմանությունից հետո ծաղկունք ապրեց հայ գրականությունը: Ողբն իր մեջ գեղարվեստական մտածողության որոշակի տարրեր ունեցող, սակայն գործառնական իմաստով տարբեր նպատակ հետապնդող ժանր է: Ներկայացնում և ընդհանրացնում է 5-րդ դարի հայ ժողովրդի պատմության ողբերգական ընթացքը՝ իր ծանրագույն հետևանքներով հանդերձ: Ողբի առաջացման համար հիմք է հանդիսացել ժողովրդական բանահյուսության մեջ հայտնի ողբասացությունը, որն անմիջականորեն կապված է մարդկային կյանքի

դրամատիկ ու ողբերգական առօրյայի հետ: Հայ գրականության մեջ կարելի է ասել, որ այս ժանրի լավագույն ու առաջին արտահայտությունը Մովսես Խորենացու «Ողբն» է: Խորենացին իր «Ողբի» մեջ հիշեցնում է Սուրբ Գրքի Երեմիային: Չափազանցություն չի լինի, եթե նկատենք, որ համաշխարհային գրականության մեջ, այս ժանրի արարման առումով, անգերազանցելի են մասցել գրավոր խոսքի երեք հզորագույն դեմքերը՝ Երեմիան, Խորենացին և Նարեկացին: Տեսնում ենք նաև, որ ծովածավալ մտքի տեր Նարեկացին, իր հերթին, Մատյանը գրելու ընթացքում որոշակի ներշնչանք է ստացել ոչ միայն Երեմիայից, որի անունը տալիս է Մատյանում, այլև հատկապես Խորենացու «Ողբից»: Համոզվելու համար կարևորում ենք երկու հանգամանք, որոնցից մեկը բովանդակային է, մյուսը՝ բանարվեստային: Խորենացու քննադատական շեշտադրությունները, որոնք հասցեագրված են անիմաստասեր թագավորներին, անմիաբան իշխաններին, նյութապաշտ հոգևորականներին, անարդար դատավորներին և անազնիվ առևտրականներին, նույնությամբ առկա են նաև Նարեկացու Մատյանում: Ողբերգությունը հայ գրականության մեջ հանդես է եկել պատմագրական աշխատություններում, որպես ողբական հատվածներ, որը մինչև 12-րդ դարը եղել է արձակ և որպես ինքնուրույն սեռ՝ գլխավորապես չափածո: Խորենացու ստեղծագործությունը իր ժամանակի բարձրակետն էր և ներկայումս էլ ողբի ժանրի լավագույն գործերից մեկը, սակայն որպես ինքնուրույն ժանր՝ այն գործածվեց միայն միջնադարում: Աստվածապետ Նարեկացու Մատյանը խորհրդանշում է մեր ժողովրդի անսասան հավատն ու երկնավորին հառված երբեք չխամրող հայացքը: Նրանց է ապավինել հայը փորձության ծանր ժամերին «...մեր ժողովուրդը Ավետարանին քով պիտի համարձակիմ ըսել՝ անկից առաջ դրած է զայն. իր աղոթքի գերազույն գիրքը նկատած է զայն, «հայ» աղոթքին նվիրական գիրքը» [13, էջ 300]: Գրականության այս ժանրը թեև իր մեջ ներառում է ժողովրդական ողբասացության որոշ տարրեր, բայց տարբերվում է նրանցից իր բնույթով և ընդգրկումով: Այն կարող է նվիրված լինել ազգային-եկեղեցական նշանավոր մի գործչի, կամ ժողովրդական կյանքում տեղի ունեցած եղերական մի իրադարձության, պատերազմների և զանազան աղետների, որոնց եղերերգումը դուրս է բերվում նեղ ընտանեկան կամ տեղական միջավայրից և դիտվում բազմակողմանի՝ որպես ազգային նշանակություն ունեցող ողբերգություն: Անձնական ողբերի լավագույն օրինակը միջնադարյան հայ գրականության մեջ Գր. Նարեկացու «Մատեան

ողբերգութեան»-ն է, ուր հեղինակը, որպես զղացող անհատ, ներկայանում է ապաշխարողի խորունկ անկեղծությամբ և մարդկության վիճակի ողբերգականության գիտակցությամբ՝ աներևակայելի բարեպաշտությամբ կառչելով փրկության հույսին: Նարեկացին այն համարել է «ողբերի երգ», թեև ձեռագիր օրինակները գրված են արձակ: 20-րդ դարում այն տողատել են, զրել բանաստեղծության ձևով և անվանել պոեմ: Երկում կան նաև արձակ հատվածներ, որոնք ունեն դավանաբանական կամ մեկնողական բովանդակություն: Պոեմը միջնադարյան հայ գրականության ամենաուշագրավ և արժեքավոր հեղինակությունն է, որն ամենատարածված բնագիրն է հանդիսացել Սաղմոսարանից ու Նոր Կտակարանից հետո: Այն համեմատվել է Սուրբ գրքի հետ և ծառայել ինչպես հոգևոր ներշնչման, այնպես էլ բանաստեղծական խոր ապրումների աղբյուր: Պատմական ողբը հայ հին և միջնադարյան գրականության ինքնատիպ ժանրերից մեկն է, որի գոյությունը պայմանավորված է մեր պատմության եղերական ընթացքով, Հայոց աշխարհին պատուհասած մեծագույն ողբերգություններով, օտար նվաճողների ասպատակություններով, դաժան հարստահարումներով ու գերեվարումներով, հուսահատության մատնված մարդկանց զանգվածային գաղթերով: Պատմական ողբերն ունեն ընդգծված ազգային հայրենասիրական բովանդակություն և քաղաքական նպատակառողպածություն:

«Զնագնդի» մեթոդով ողբերն ընթերցելու ընթացքում շատ կարևոր է աշխատանքը բնագրի հետ: Ցանկալի է կարդալու ընթացքում դուրս գրել թեավոր խոսքերն ու ասացվածքները: Անցյալի ու ներկայի միասնությունը ձևավորում է կարևոր նշանակություն ունեցող ժամանակների կապը, որը ժամանակային պարզ հաջորդականությունից վերածվում է նաև դաստիարակչական հնարների ընտրության հեղինակային հայեցակետի: Ողբերում իրական նկարագրությունը նրբորեն կտրվում-անջատվում է առարկայական կշռից, նյութական ծանրությունից, շարունակվում մտքի և բարոյախոսության ոլորտում և տրվում մտածողության և խոհական թռիչքներին: Ողբերն իրենց բարոյախոսությամբ մեզ պարտավորեցնում են սերնդեսերունդ փոխանցել այլաբանորեն ասված դիպուկ խոսքերը: Հիշողությունը պայքարի գենք է և գոյատևման հնարավորություն: Տեսողությունն ու մտքի հայցքը միասնաբար են ընկալում ու վերարտադրում երևոյթը, շարժումը, գոյությունը: Ողբագրությունը մեզ համար քարտեզագրում է սի ամբողջ աշխարհ, որը

դաստիրակշական ինքնատիպ հնարներ ունի: Այն ծնվել է իրականությունից, հասարակությանը դաստիրակելու մտահոգությունից: Սա էր ողբի գրական դպրոցը՝ թե՝ որպես գրական դասերի դպրոց, և թե՝ որպես գրական կողմանորոշման դպրոց:

## **Բ.1. Ուսուցման մեթոդները գրական տեսակի դասավանդման**

**ընթացքում:** Ըստ հանրակրթական պետական առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի՝ «Հայ գրականություն» առարկային ավագ դպրոցի 10-րդ դասարանում հատկացվում է 68 ժամ՝ շաբաթական 2 դասաժամ: Ավագ դպրոցի 10-րդ դասարանում ողբի թեմայի ուսուցման համար առանձին դասաժամ հատկացված չէ, այն ուսումնասիրվում է համապատասխան թեմատիկ շրջանակներում, այսինքն՝

- Մովսես Խորենացի. «Ողբ» - 1 ժամ
- Գրիգոր Նարեկացի. «Մատյան ողբերգության» - 3 ժամ
- Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոեմը՝ իբրև ակնարկային թեմա<sup>1</sup>

Թեմայի ուսուցումն ավագ դպրոցում պետք է իրականացնել ոչ ստանդարտ մեթոդներով՝ դասին ստեղծագործաբար մոտենալով: Եթե սահմանափակվենք միայն դասազրքային տեղեկատվության փոխանցմամբ, ապա աշակերտների մոտ այն որևէ հետաքրքրություն չի առաջացնի և շատ շուտ կմոռացվի: Մինչդեռ որևէ հետաքրքիր, որևէ փոքրիկ զգացմունքային պատմությամբ կարելի է գրավել աշակերտների ուշադրությունը և հետաքրքրություն առաջացնել: «Երեք բանալի և մեկ կողպեք» համագործակցային ուսուցման մեթոդով կարելի է աշակերտներին բաժանել փոքրիկ խմբերի: Ծավալուն նյութի դեպքում այս մեթոդը բավականին արդյունավետ է: Աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմսավորելու կարողություն: Քանի որ թեման ուսումնասիրվում է 10-րդ դասարանի ծրագրում, ցանկալի է կազմակերպել ֆիլմի դիտում՝ ստեղծագործությունները բոլորովին նոր լուսի տակ ընկալելու նպատակով: «Հինգ րոպեանոց ազատ շարադրանքի» մեթոդը ցանկալի է կիրառել կշռադատման փուլում՝ հնարավորություն տալով աշակերտներին ազատորեն շարադրել իրենց մտքերը և ունկնդրել մի քանիսի շարադրանքը: Մեր ժամանակներում առաջնակարգ

<sup>1</sup> ՀՀ ԿԳՄՍՆ, Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի նախագիծ (Հայ գրականություն), <https://escs.am/am/news/6716>: (Հասանելի՝ 08. 05. 2023թ.):

նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապը: Ուսուցման գործնթացում այն կարևոր տեղ պետք է զբաղեցնի: Ողբի թեմայի ուսուցման ժամանակ շատ կարևոր է զուգահեռներ տանել «Հայոց պատմություն» առարկայի հետ: Թեմայի ուսուցման ընթացքում անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը հրավիրել հեղինակների մարդկային վեհ ու բարձր հատկանիշների վրա: Օրինակ՝ Ս. Խորենացին և Գր. Նարեկացին ոչ միայն որպես անհատ, որպես պատմիչ կամ որպես քնարերգու, այլև որպես խոտացում և հավաքական կերպար. ժողովուրդը պանծացրել է նրանց ասք ու զրուցներով, որոնցում հանգուցված են իրականն ու հեքիաթայինը, իսկությունն ու առասպելը:

«Դերային խաղ» մեթոդով աշակերտներն ընտրում են որևէ կերպար և փորձում են բեմականացնել փոքրիկ դրվագներ: Այն կօգնի, որ դասն ավելի տպավորիչ լինի: Անհրաժեշտ է համակողմանիորեն ներկայացնել նյութը, որպեսզի երեխաները տիրապետեն նաև պատմագրական, բանահյուսական ու գրականագիտական համապարփակ գիտելիքների:

Դասն ավելի շարժուն ու հետաքրքիր դարձնելու համար կարելի է զուգահեռներ տանել ու համեմատել ողբի թեմատիկ ընդհանրությունները տարբեր հեղինակների մոտ:

Աշակերտներին հարկավոր է ներկայացնել ողբի ակունքները: Այս ժանրի մասին լավագույն պատկերացում կազմելու համար շատ կարևոր է Սուրբ գրքի ուսումսասիրությունը, քանի որ ողբի զարգացման վրա մեծ ազգեցություն ունի այն, հիմնական գործերը վերաբերում են մաքրագործվելուն ու դեպի Աստվածիայտնություն գնալու ձանապարհին: Այս ամենից զատ կարևոր է նաև հայոց պատմությանը տիրապետելը. մեր գրեթե բոլոր ողբերը նվիրված են հայրենիքին ու նրա տիսուր ձականագրին, որոնք հաճախ գրվել են իրադարձությունների անմիջական տպավորության ներքո:

Աշակերտների ուշադրությունն անհրաժեշտ է հրավիրել այն փաստին, որ թեմայի ուսումսասիրությունն արժանի է մեծ ուշադրության, քանի որ այն կարծես հայ ժողովրդի արյան մեջ է, և ողբ ասելով՝ չպետք է հասկանալ միայն անցյալի սիսակաների ըմբռնում ու զղում, արդեն վերևում նկատեցինք, որ յուրաքանչյուր գործ ավարտվում է լավատեսական շեշտադրությունով և ապրելու, կովելու, պայքարելու, արարելու ու մաքրագործվելու յուրօրինակ կոչ է արտահայտում:

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԻ ՊԼԱՆ

**Առարկա-** Հայ գրականություն

**Դասարան-** 10-րդ դասարան

**Թեմա-** Մովսես Խորենացի. «Ողբը»

**Դասի տևողությունը – 45 րոպե**

**Դասի տիպը-** Նոր նյութի հաղորդում

**Դասի նպատակը**

- Պատկերացում տալ ողբի ժանրի մասին.
- Ներկայացնել ողբի ժանրային առանձնահատկությունները.
- Ծանոթացնել Մովսես Խորենացու «Ողբ»-ին.
- Ներկայացնել ստեղծագործության արդիականությունը.

**Դասի խնդիրները**

**Բնանա**

- Մովսես Խորենացու «Ողբը»:
- Ինչո՞ւ է ողբում պատմահայրը:
- Ինչպե՞ս է Խորենացին բնորոշում ուսուցիչներին, աշակերտներին, կրոնավորներին, զինվորականներին, դատավորներին, իշխաններին, ինչո՞ւ:

**Կարողանա**

- Ներկայացնել և մեկնաբանել մեծ պատմիչի ողբի պատճառները՝ նկարագրելով, որ նա դառը կակիծով է պատկերում իր երկրի թշվառ վիճակը, հայրենի գահից անարգաբար վտարված թագավորին, եկեղեցու՝ իր «քաջ հովվից և հովվակցից» զրկվելն ու անտերության մատնվելը, առաջնորդների շղթայված լինելը, նշանավոր մարդկանց բանտարկված լինելը, ռամիկների անթիվ նեղություններ կրելը և այլն:
- Անզիր արտասանել հատվածը, որտեղ պատմիչը սպում է սիրելի ուսուցիչների՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի մահը:
- Գրել ուժինական հետևյալ վերնագրով՝ «Մովսես Խորենացու «Ողբում» արծարծված թեմաների արդիականությունը»:

➤ Համեմատել Խորենացու ժամանակները մեր ժամանակների հետ. ի՞նչ ընդհանրություններ ու տարբերություններ կարելի է առանձնացնել:

**Ուսուցման միջոցներ** - «Հայ գրականություն 10» դասագիրք, Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» բնագիրք, Աստվածաշնչից ողբի օրինակներ (հատվածներ), սահիկահանդես, համակարգիչ և պյուեկցիոն սարք, գրատախտակ, տեսոր,

**Միջառարկայական կապեր** - Հայոց պատմություն, Ինֆորմատիկա,

**Ուսուցման մեթոդներ և հնարներ** - բացատրական կամ ընտրովի ընթերցանություն, խոսքային (զրոյց, հարց ու պատասխան), զննական-ցուցադրական, «Ժամանակի մեքենա» (երևակայական ձանապարհորդություն), «Վենի դիագրամ»

**Դասի ընթացքը. կազմակերպչական-նախապատրաստական փուլ**

- ❖ Սովորողների հաշվառում
- ❖ Դասասենյակի համապատասխան կահավորում՝ դասը ճիշտ կազմակերպելու համար
- ❖ Կրթական բարենպաստ մթնոլորտի ստեղծում

Դասը սկսում ենք **ԽԻԿ** համակարգով

### **Խթանման փուլ**

Այս փուլը սկսում ենք զրոյցի միջոցով: Փորձում ենք պարզել, թե աշակերտները ի՞նչ են հասկանում ողբ ասելով: Լսում ենք աշակերտների մտքերը և հաջողված տարբերակները զրում ենք զրատախտակին, միաժամանակ չենք անտեսում նաև արտահայտված մյուս գաղափարները: Դասի վերջում, երբ արդեն պիտի ամփոփենք ողջ նյութը, անդրադարձ ենք կատարում աշակերտների մտքերին, հասկանալու համար՝ ինչքան էին մոտ ճիշտ պատասխանին:

### **Իմաստավորման փուլ**

Այս փուլում խոսում ենք ողբի ժանրի և Մովսես Խորենացու «Ողբ»-ի մասին: Ողբի ժանրը ներկայացնում ենք սահիկահանդեսի միջոցով, որի մեջ ներառված են հետևյալ հարցերը.

- ✓ ի՞նչ է ողբի ժանրը
- ✓ ինչպիսի՞ ծագում ունի այն
- ✓ որո՞նք են Աստվածաշնչյան ողբերը

- ✓ քանի՞ սն են ողբի տեսակները և որո՞նք են: Հակիրճ ներկայացնել դրանց բովանդակությունը
- ✓ ո՞րն է պատմական ողբի հնագույն նմուշը: Մովսես Խորենացու «Ողբ»-ը որտե՞ղ է գետեղված, ի՞նչ խնդիրներ և գաղափարներ է արձարծում Մովսես Խորենացին այստեղ: Աստվածաշնչյան ո՞ւմ ողբերն է որպես օրինակ ունեցել իր աչքի առաջ: Բերել այդ ողբերից օրինակ-հատվածներ:

Այս ամենը ներկայացնելուց հետո կիրառում ենք «Ժամանակի մեքենա» մեթոդը: Մտովի տեղափոխվում ենք 5-րդ դար և վերիիշում պատմական ժամանակաշրջանը: Հիշում ենք, թե պատմական ինչ իրադարձություններ էին տեղի ունենում Հայաստանում: Այստեղ մեզ օգնության է գալիս Հայոց պատմության ուսուցուիչն, ով հակիրճ ներկայացնում է այդ պատմական ժամանակաշրջանը:

Հայոց պատմության ուսուցուիչու խոսքից հետո շարունակում ենք մենք և ասում, որ այսքանից հետո կլ ի՞նչ էր մասում Պատմահորը, քան աղի արցունքներով ողբալու Հայոց աշխարհի դառնապատիր բախտը: Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ը փոխանցում ենք աշակերտներից մեկին և ասում, որ կարդա «Ողբի» առաջին հատվածը. «Ողբում եմ քեզ Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ...» մինչև 3-րդ պարբերության ավարտը, այնուհետև ընթերցված հատվածից հարցեր ենք տալիս աշակերտներին.

- ընթերցված հատվածում ի՞նչն էր ողբում Խորենացին, և արդյո՞ք դա ողբի առիթ էր:
- ի՞նչ նկատի ունի Խորենացին, եթե ասում է. «... եղավ մի ժամանակ, որ փեսան և խաչեղբայրը հեռացվեցին, բայց դու հարսդ, համբերեցիր, ուղղախոհությամբ պահելով ամուսնությունդ: ... Եթե մեկը սիրեկանի նման հանդգնաբար հարձակվեց քո անարատ առագաստի վրա, դու, հարսդ, չապականվեցիր, թեպետ բռնի կերպով փեսան վտարվեց, եթե ստամբակ որդիները իրենց ծնողին անարգեցին, միանգամայն և խորթերը արժանապես օտար հորը և եկվոր խորթ հորը, բայց դու այս անգամ կլ ամեն բանով լրված շմասցիր...»:

Այնուհետև պատասխանները լսելուց հետո կատարում ենք ընդհանրացում. Իսկապես Հայաստանում այնքան ծանր էր իրավիճակը, որ Խորենացին ասում է. «Ավա՞ դ այս զրկանքներին, ավա՞ դ այս թշվառ պատմության: Ինչպե՞ս դիմանամ այս ցավերին...»:

Խորենացու վիշտն էլ ավելի է մեծանում, եթե իմանում է իր սուրբ հայրերի մահը և ողբում դառնաղի (համապատասխան հատվածը կարդում է մի ուրիշ աշակերտ, որից հետո ամփոփում ենք հարցերով)։

- ովքե՞ր են այն երկու այրերը, որոնց մահը ողբում էր Պատմահայրը։
- ի՞նչ գիտեք նրանց մասին։

Պատասխանները լսելուց հետո անցնում ենք առաջ։

Հեղինակը տառապագին ապրումներ է արտահայտում, խորապես ցավում հայոց պետականության կորստի համար, որի պատճառով խառնվում է ամեն ինչ, անզամ տարվա եղանակներն են փոփոխվում, խոռվում է խաղաղությունը. «...գարունը երաշտ, ամառը սաստիկ անձրևային, աշունը ձմեռ դարձած, ձմեռը սաստիկ ցուրտ, մրրկալից և երկարատև...»։

Երկրում սկսվում են անկարգություններ, օտարները թալանում են երկիրը, աքսորում են մարդկանց ու բանտարկում, թալանում են ու կեղեքում շինականներին, քանդվում են ամրոցներ, գրավվում են քաղաքներ, հրդեհվում են ապարանքներ, տարածվում են սովու ու հիվանդությունները, խարիսվում է հավատը, արմատավորվում է տգիտությունը։

Խորենացին իրեն ողբակցելու է հրավիրում Երեմիա մարգարեին և խնդրում, որ նա էլ, ինչպես Զաքարիան խրայելացիների համար, գուշակի, թե տգետ հովիժսեր պետք է երևան գան։ Եվ Խորենացին թվում է հասարակության բոլոր խավերին և ներկայացնում յուրաքանչյուրի արատները. ուսուցիչները տիսմար էին, ինքնահավան։ Կրոնավորները՝ կեղծավոր, սնափառ։ Աշակերտները սովորելու մեջ ծույլ սովորեցնելու մեջ փութաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են։ Զինվորականները՝ կողոպտիչ, զինեմոլ, ավազակներին համաբարո։ Իշխանները գողերին գողակից, ազահ, իսկ դատավորները՝ կաշառակեր, ստախոս։ Եվ վերջում ասում է, որ «Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած»։

Այսինքն, եթե մարդիկ միմյանց սիրեին և փոքր-ինչ ամոթի զգացում ունենային, չին լինի այսքան արատավոր և ազգակործան։

Խորենացին տեսավ ու արձանագրեց ամեն բացասական բան, ցույց տվեց պատճառները և արդյունքները, որպես փրկություն վկայակոչելով Աստծուն։ «Որից փրկե Քրիստոս Աստված մեզ և բոլորին, որոնք ձշմարտությամբ երկրպագում են նրան։ Նրան փառք բոլոր առեղծվածներից, ամեն»։


Այսքանը Մովսես Խորենացու «Ողբ»-ի մասին: Անդրադարձ ենք կատարում դասի սկզբում աշակերտների հայտնած մտքերին, ամփոփում ու անցնում հաջորդ փուլին:

### Կշռադատման փուլ

Այս փուլում կատարում ենք «Վենի դիագրամ» մեթոդը. հարցը հետևյալն է.

- Համեմատել Խորենացու ժամանակները մեր ժամանակների հետ. ի՞նչ ընդհանրություններ ու տարբերություններ կարելի է առանձնացնել:

Այսպիսով, մենք պարզում ենք նաև թեմայի արդիականությունը.



### Տնային աշխատանք

- Ներկայացնել Մովսես Խորենացու «Ողբ»-ը և սովորել անգիր հատվածներ (հատվածների ընտրությունն ըստ ցանկության):
- Գրել ոեֆերատ հետևյալ վերնագրով. «Մովսես Խորենացու «Ողբում» արծարծված թեմաների արդիականությունը»:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից կատարվ ած վերլուծությունները թույլ են տալիս՝ կատարելու հետևյալ եզրահանգումները:

- Ողբի ժանրը թեև իր մեջ ներառում է ժողովրդական ողբասացության որոշ տարրեր, բայց տարբերվում է նրանցից իր բնույթով և ընդգրկումով: Այն կարող է նվիրված լինել ազգային-եկեղեցական նշանավոր մի գործի, կամ ժողովրդական կյանքում տեղի ունեցած եղերական մի իրադարձության, պատերազմների և զանազան աղետների, որոնց եղերգումը դուրս է բերվում նեղ ընտանեկան կամ տեղական միջավայրից և դիտվում բազմակողմանի՝ որպես ազգային նշանակություն ունեցող ողբերգություն:
- Ողբերն իրենց բարոյախոսությամբ մեզ պարտավորեցնում են սերնդեսերունդ փոխանցել այլաբանորեն ասված դիպուկ խոսքերը: Ողբագրությունը մեզ համար քարտեզագրում է մի ամբողջ աշխարհ, որը դաստիրակշական ինքնատիպ հնարներ ունի: Այն ծնվել է իրականությունից, հասարակությանը դաստիարակելու մտահոգությունից:
- Խորենացին իր ողբով դարձավ դարի արտացոլումը՝ նկարագրելով պետականությունից զրկված հային ու հայությանը. մեծ ցավով ու վշտով ներկայացրեց իր ազգի թշվար վիճակը: Պատմահայրը փորձեց ախտորոշել միջավայրի հիվանդությունը, որից սկիզբ էին առնում բոլոր խնդիրները և որպես փրկություն վկայակոչեց Աստծուն:
- Թեմայի ուսուցման արդյունավետությունն ապահովելու համար ուսումսասիրվում են ավագ դպրոցի սաների տարիքային առանձնահատկությունները, որոշվում են աշխատանքի բովանդակության սահմանները, ինչպես նաև գործունեության եղանակները և ձևերը:
- Ուսուցման ակտիվ մեթոդների կիրառությունն ապահովում է սովորողների գործուն մասնակցությունը նյութի՝ ողբի ժանրի ուսուցման գործընթացին:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Մենազրություններ, ուսումնասիրություններ

1. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հատոր 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1946, 599 էջ:
2. Աստվածաշունչ, Մայր աթոռ սուրբ Էջմիածին, Հայաստանի Աստվածաշնչային լոնկերություն, 2017, 1501 էջ:
3. Բախչինյան Հ., Դավթակ Քերթողի «Ողբք ի մահն Զուանշիրի մեծի իշխանին» երկի ժանրային բնութագիրը, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., «Միսմա» ՍՊԸ, 2020, 449 էջ:
4. Բախչինյան Հ., Սարինյան Ս., Հայ գրականություն 10, Եր., «Արևիկ» հրատ., 2009, 238 էջ:
5. Գասպարյան Դ., Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2009, 925 էջ:
6. Դավթակ Քերթող, Ողբ մեծ իշխան Զևանշիրի մահվան մասին, Գրական-գեղարվեստական տեսական-քննադարտական ամսագիր, Եր., «Սովետական գրականություն», հրատ., N 6 1979 հունիս, 164 էջ:
7. Եղիազարյան Վ., Հայ հին գրականության պատմություն, Եր., «Արմավ» հրատ., 2014, 488 էջ:
8. Խաչատրյան Պ., Հայ միջնադարյան պատմական ողբեր (14-17-րդ դդ.), Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, 342 էջ:
9. Խորենացի Մ., Հայոց պատմություն, Եր., «Հայաստան» հրատ., 1990, 320 էջ:
10. Մկրտյան Մ., Գրիգոր Նարեկացի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1955, 308 էջ:
11. Նալբանդյան Վ., Ներսիսյան Վ., Բախչինյան Հ., Հայ միջնադարյան գրականություն (Համառոտ պատմություն), Եր., «Սովետական գրող» հրատ., 1986, 164 էջ:
12. Նարեկացի Գ., Մատյան ողբերգության, Էջմիածին, Մայր աթոռ սուրբ Էջմիածնի հրատ., 2012, 656 էջ:
13. Չոպանյան Ա., Երկեր, Եր., «Սովորական գրող» հրատ., 1988, 862 էջ:

14. Զուհարյան Թ., Հայ գրականության մեթոդիկա, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1972, 522 էջ:
15. Սարուխանյան Ս., Դալլաքյան, Ա., Դիշաղաջյան Ն., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, «Վանատուր» ՍՊԸ տպարան, 2008, 101 էջ:
16. Սաֆարյան Վ., Հայոց միջնադարյան գրականություն, Եր., ԵՊՀ հրատ., 2016, 361 էջ:
17. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., Հայկական Հանրագիտարան հրատ. ՊՈԱԿ, 2002, 1200 էջ:
18. Օրբելյան Ս., Ողբ ի սուրբ Կաթուղիկէն, Թիֆլիս, Մովսէս Վարդանյանի տպարան, 1885, 69 էջ:

Բ. Էլեկտրոնային աղբյուրներ

1. <https://escs.am/am/news/6716> (հասանելի է՝ 08. 05. 2023թ.):